Հովերն աշնան,
Պարն ամեհի:

Ու դէպ ի տուն
Միշտ1[1] կը դիմեն
Շեշտերն ամէն
Ծիծաղներուն.
Միշտ դէպ ի տուն
Ու դէպ ի ներս
Բոլոր իղձերս
Ա՛լ տարիր դուն,
Չքնա՛ղ աշուն:

Դէպ ի տամուկ
Պատուհանին
Ա՛լ կը յառին
Աչքերս հիմակ,
Ու1[1] սէ՛ր համակ,
Երգըդ կ'իջնէ
Սրտիս[a] ուր նէ
Իղձ մը ճերմակ
Պիտի գտնէ:

Չէ՛, հովերուդ
Հետ ցաւը չէ՛
Որ կը տանջէ
Սիրտըս հըրուտ.
Այլ1[1] կը դառնան
Ինծ, յուզմունքէդ
Բողբոջ գարնան
Արեւաշող
Յոյսերն յաւէտ:

## 21. ՀՈՎԻՆ ԱՆՑՔԸ

Անդնդագալար ովկիանի պէս
Կ'ուռի այս գիշեր հովն ալիք ալիք,
Կը ծըծեմ լեղի սարսափն իր ճամբուն...
Իր լալոնին մէջ սենեակս է ծըփո՛ւն,